ՀՐԱՁԳԱՐԱՆՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«ԱՍՊԱՐ ԱՐՄՍ» հրաձգարանի բոլոր այցելուները ուսուցման, սիրողական, սպորտային վարժանքների հրաձգության և տակտիկական պարապմունքների ընթացքում պարտավոր են խստորեն պահպանել անվտանգության կանոնները: Հրաձգարանում անվտանգության կանոնների պահպանմանը հետևում է **Հրահանգիչը**:

Հրաձգարանի տնօրինությունն իրեն իրավունք է վերապահում առանց պատճառների բացատրության հրաժարվել սպասարկել այցելուին:

1. Այցելուն կրակելու իրավունք ունի միայն հրաձգարանում գործող ներօբյեկտային և անվտանգության կանոններին, զենքի կառուցվածքին, լիցքավորման և լիցքաթափման տեխնիկային, նշանառության և հրաձգության մեթոդներին ծանոթանալուց հետո:

2. Թմրամիջոցներ կամ ալկոհոլ օգտագործած անձանց Հրաձգարանի մուտքն **արգելված է:** Այս կամ այլ պատճառով այցելուի մուտքը հրաձգարան թույլ չտալու որոշումը ընդունվում է Հրաձգարանի ղեկավարության և **Հրահանգչի** կողմից :

3. Երկու և ավել տարբեր այցելուներ (խմբեր) միաժամանակ չեն կարող գտնվել հրաձգարանում և օգտվել հրաձգարանային ծառայություններից:

4. Հրաձգարանից դուրս ցանկացած զենք, այդ թվում այցելուին պատկանող, պետք է լինի պատյանում կամ տուփում՝ լիցքաթափված և ապահովիչի բերված: Հրաձգարանի տարածքում զենք կրելը թույլատրվում է միայն լիցքաթափված և պատյանով, **Հրահանգչի** ուղեկցությամբ:

5. Հրաձգարանում այցելուին պատկանող զենքը պատյանից կամ տուփից հանել թույլատրվում է միայն զենքի գործարանային համարի ստուգման համար, **Հրահանգչի** հրահանգով: Զննման ժամանակ զենքը լիցքավորելը խստիվ **արգելվում է**:

6. Այցելուի անձնական զենքը ենթակա է պարտադիր ստուգման **Հրահանգչի** կողմից՝ կրելու և պահելու թույլտվության համապատասխանության համար:

8. Զենքով պարապմունքների և կրակոցների ժամանակ մարդկանց **արգելվում է** գտնվել կրակային ուղղություններում: Եթե մարդիկ հանկարծ հայտնվեն կրակագծի ուղղությամբ, բոլոր հրաձիգների կողմից կրակոցները պետք է անմիջապես դադարեցվեն՝ ինքնուրույն կամ **Հրահանգչի** «Դադարեցրեք կրակոցը» կամ «Կանգնիր» հրամանով: Զենքն անմիջապես բերվում է ապահովիչի և պահվում է ապահով ուղղությամբ՝ ցուցամատը ձգանի վրայից հեռացված: **Արգելվում է** զենքին և զինամթերքին դիպչել նույնիսկ **Հրահանգչի** հրամանով, եթե թիրախային տարածքում կամ կրակային ուղղությամբ մարդիկ կան:

9. Զենքը լիցքավորել և լիցքաթափել թույլատրվում է միայն կրակային դիրքում՝ **Հրահանգչի** անմիջական հսկողության ներքո և միայն նրա «լիցքավորել» կամ «լիցքաթափել» հրամանով: Կրակային դիրքից դուրս զենքը պետք է լինի լիցքաթափված վիճակում, փամփուշտներից առանձին և ապահովիչի դրված (եթե այն կա):

10. Արգելվում է լիցքավորված զենքը կամ զինամթերքն առանց հսկողության թողնել կրակային դիրքում:

11. Արգելվում է վերցրնել կամ հպվել զենքին առանց **Հրահանգչի** հրամանի կամ «դադարեցնել կրակը» հրամանից հետո:

12. Արգելվում է հպվել կամ վերցրնել ուրիշի զենքն ու զինամթերքը, որը գտնվում է Հրաձգարանում:

13. Արգելվում է կրակել այլ առարկաների վրա, որոնք թիրախ չեն հանդիսանում:

14 Արգելվում է թիրախավորել կամ կրակել այլ հրաձիգի թիրախի վրա:

15. Անգամ չլիցքավորված զենքը մի ուղղեք ինքներդ ձեզ: Ոչ մի դեպքում չպետք է այն ուղղեք մարդկանց վրա:

16. Հեռացրեք ձեր մատը ձգանից զենքը լիցքավորելիս և լիցքաթափելիս, ինչպես նաև այլ գործողությունների ժամանակ, եթե չեք պատրաստվում կրակել թիրախին:

17. Արգելվում է դիպչել սեղանին դրված զենքերին ու զինամթերքին, եթե մարդիկ կան կրակագծում.

18. Հրաձիգին զենքի հետ վարվելու հմտություններ սովորեցնելիս, զենքը լիցքավորելիս և լիցքաթափելիս, վարժությունների միջև ընդմիջումների ժամանակ, երբ զենքը սեղանին է, այն պետք է միշտ փողով ուղղված լինի դեպի թիրախ կամ ապահով ուղղությամբ:

19. Զենքով բոլոր գործողությունները հրաձիգը կատարում է միայն **Հրահանգչի** հրամանով: Կրակելը թույլատրվում է միայն «Կրակ» հրամանով կամ ժամանակաչափի ազդանշանով: **Հրահանգչի** «Կանգնիր», «Դադարեցրեք կրակոցը», «Լիցքաթափում» հրամանից հետո կրակողը պարտավոր է անհապաղ դադարեցնել կրակոցը և լիցքաթափել զենքը, ներկայացնել այն **Հրահանգչին**՝ բաց փակաղակով, ստուգման համար: «Ստուգված է» հրամանից հետո կատարել ստուգողական կրակոց թիրախի ուղղությամբ:

20. Զենքի անսարքության դեպքում կրակողը այդ մասին առանց ավելորդ գործողությունների, հայտնում է **հրահանգչին**՝ զենքի փողը անընդհատ ուղղված պահելով դեպի թիրախը: Առանց **հրահանգչի** հրամանի խստիվ **արգելվում է** ինքնուրույն վերացնել անսարքությունը:

21.Վարժությունների կամ կրակոցների արանքում հրաձիգը կարող է զենքը դնել սեղանին միայն զենքը լիցքաթափելուց, պահունակը հանելուց և **Հրահանգչի** կողմից ստուգելուց հետո: Այս դեպքում զենքի փակաղակը պետք է բաց լինի:

22. Որևէ կրակագծում թիրախը փոխելիս կրակը դադարեցվում է բոլոր կրակային դիրքերում: Զենքը այս դեպքում լիցքաթափվում է և դրվում է ապահովիչի:

23. Զենքը կրակային դիրքից կարող է հանվել միայն **Հրահանգչի** թույլտվությամբ՝ լիցքաթափվելուց և ստուգվելուց հետո:

24. Հրաձիգը պարտավոր է անմիջապես դադարեցնել կրակը, եթե կորցնում է կողմնորոշումը և նկատում է ինքնազգացողության վատթարացում, ինչպես նաև, երբ հայտնաբերվում է զենքի անսարքություն կամ ռազմամթերքի թերություն:

25. Արգելվում է կրակային դիրքից դուրս կրակոցի նախապատրաստվելը:

26.Արտակարգ իրավիճակի դեպքում կրակողը պետք է խստորեն հետևի **Հրահանգչի** հրահանգներին.

27. Հրաձգարանում այցելուի ոչ պատշաճ պահվածքի, **Հրահանգչի** հրամանները և պահանջները չկատարելու, հրաձիգի կողմից անվտանգության և վարքի սահմանված կանոնների կոպիտ խախտման դեպքում, հրահանգիչը դադարեցնում է կրակոցը, հրաձիգը անմիջապես հեռացվում է կրակային դիրքից և **Հրահանգիչը** հայտնում է այդ մասին Հրաձգարանի տնօրինությանը: Հրաձգարան հետագա այցելության հարցը որոշում է Հրաձգարանի տնօրինությունը:

28. Եթե այցելուն վնաս է հասցնում հրաձգարանի տարածքին, սարքավորումներին կամ գույքին, ապա պարտավոր է փոխհատուցել վնասի արժեքը:

29. Հրաձգարանի այցելուները պարտավոր են պահպանել հրդեհային անվտանգության կանոնները:

30. Հրաձգարանում ծխելը խստիվ **արգելվում է:**

31. Հրաձգարանի տնօրինությունը պատասխանատվություն չի կրում հսկողությունից դուրս թողնված հագուստի, փաստաթղթերի, գումարի, բջջային հեռախոսների, զարդերի և այլ անձնական իրերի կորստի համար:

32. Հրաձգարանի տնօրինությունը պատասխանատվություն չի կրում, եթե այցելուների կողմից անվտանգության կանոնակարգերին, ներքին կանոններին չհետևելու արդյունքում պատճառվել են մարմնական վնասվածքներ, կամ հրաձգարանի տարածքում կանոններին չհետևելը հանգեցրել է անձանց մահվան:

Այս ստորագրությամբ հաստատում եմ, որ կարդացել և ծանոթացել եմ կանոններին, բոլոր հարցերը բացատրված են և հասկանալի :

Ստորագրություն	թվական/ժամ	Ա.Ա.Հ.	անձնագիր